ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 2057-Ա/2 **10.11.2022 թ.**

ՇՆՈՐՀԱԼԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ «ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՀԱՄԵՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ շնորհալի երեխաների մասնակցությամբ «Ավանդույթների պահապանները» խորագրով համերգի կազմակերպման նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել շնորհալի երեխաների մասնակցությամբ «Ավանդույթների պահապանները» խորագրով համերգի կազմակերպման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) նախատեսված գումարներից հատկացնել 2011,2 հազար (երկու միլիոն տասնմեկ հազար երկու հարյուր) դրամ՝ շնորհալի երեխաների մասնակցությամբ «Ավանդույթների պահապանները» խորագրով համերգի կազմակերպման ծախսերն ապահովելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝

սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Հայաստանի պետական ֆիլհարմոնիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

4. Նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ հսկողություն, բովանդակային հաշվետվությունների ընդունման գործառույթներ:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X _____

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
« » « » 2022 թ.
N -Ա/2 հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

Շնորհալի երեխաների մասնակցությամբ «Ավանդույթների պահապանները» խորագրով համերգի կազմակերպման

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի պետական ֆիլհարմոնիա» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, ք. Երևան, Աբովյան 2
3	Ծրագրի անվանում	Շնորհալի երեխաների մասնակցությամբ «Ավանդույթների պահապանները» խորագրով համերգ
3.1	Բովանդակություն	«Շնորհալի երեխաների մասնակցությամբ «Ավանդույթների պահապանները» խորագրով համերգին կմասնակցեն «ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցներում ազգայի, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում» և «ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերում» ծրագրերում սովորող սաները Երևանից և ՀՀ մարզերից
3.2	Նպատակ	-Արտադպրոցական դաստիարակություն իրականացնող երաժշտական, արվեստի դպրոցների հանրային վարկանիշի բարձրացում -Գովազդատեղեկատվական արշավի իրականացում՝ ուղղված գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության ոլորտի հանրահռչակմանը, -Երևանի և ՀՀ մարզերի շնորհալի երեխաների բացահայտում
3.3	Անցկացման ժամկետ	2022 թ. դեկտեմբերի 1
3.4	Անցկացման վայր	«Առնո Բաբաջանյան» համերգասրահ
3.5	Ակնկալվող արդյունքներ	-Մշակութային ոլորտի հանրահռչակում -Շնորհալի երեխաների և պատանիների մասնագիտական ունակությունների և ստեղծագործական կարողությունների զարգացում ու խթանում -Երևան- մարզ մշակութային կապի ամրապնդում
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	1 համերգ Շուրջ 60 մասնակից

		300 համդիսատես